գնաց յԱդրիանուպոլիս, ուր հասեալ էր յայնժամ Եպարքոսն, և մատոյց առ նա զգիր Թիւար օղլու Բդեշխին եւ էարկ աղերս 'ի դիմաց Հայոց։ Իսկ Եպարքոսն առեալ և ընթերցեալ զթուղթն ծալեաց եւ եդ 'ի ներքոյ ծնդաց իւրոց, և ոչ արար պատասխանի առ իշխանն. այլ գրեաց գիր առ Թիւար օղլուն, թէ զոր ետուս՝ տուեալ եմ։ Բայց այսու ամենայնիւ Թիւար օղլուն թոյլ ետու Հայոց բանալ 'ի Զատկի զդուռն Ս. Յակոբայ եւ դարձեալ էառ զփականսն, այլ թողացոյց նոցա կալ անդ լռութեամբ իրրեւ 'ի ծածուկ։

Զայս լուեալ Եպարքոսին յաղդարարութենէ Յունաց, գրեաց սաստ առ Թիւար օղլուն, և ինքն եդ այնուհետեւ 'ի մտի 'ի ձեռս բերել զեղիազար եւ առնուլ զգլուխ նորա։ Եւ Հայք յանհնարինս մտեալ՝ ազդ արարին Եղիազարու զգուշանալ անձին, եւ առնուլ գիր վկայութեան 'ի դատաւորաց Երուսաղէմի և 'ի Բդեշխից. և նորա դեգերեալ այսր և անդր, շրջէր տաղնապաւ յԵգիպտոս եւ 'ի Դամասկոս և 'ի Գազա և յայլ տեղիս։

Յետ ապստամբելոյ 18 Բդեշխից՝ ընդ որս էր և Թիւար օղլու, կոչեալ առ ինքն զեղիազար պահեաց զնա առ իւր, ակն ունելով առնուլ և այլ ինչ 'ի նմանէ. և յուսացուցանէր զնա 'ի վերայ վանաց Ս. Յակոբայ, ասելով՝ թէ մեք հանդերձեալ եմք փոխել տալ զեպարքոսն, եւ կարգել զմին 'ի մէնջ Եպարքոս, եւ յայնժամ 'ի գլուխ տարայց զխնդիր քո։ Եւ թէպէտ Եղիազար ոչ հաւատայր այսմ, և աղաչէր արձակել զինքն, բայց Թիւար օղլուն ոչ եթող զնա իբր տարի մի։

Ի սմին ժամանակի նուիրակունք Ս. Էջմիածնի մտեալ 'ի սահմանս Օսմանեան Պետութեան սփռեալ էին 'ի գաւառս և 'ի քաղաքս. 'ի Վան, 'ի Տիգրանակերտ, 'ի Կարին, 'ի Տարոն եւ յայլ տեղիս. հասին նաեւ մինչ 'ի Կոստանդինուպոլիս, բաժանէին զՄիւռոնն Ս. և ժողովէին զտուրս ժողովրդոց։ Սակայն թողեալ նոցա զպաշտօնս իւրեանց, ձեռն արկին ընդդէմ կանոնի յիրս եկեղեցւոյ. փոխել զառաջնորդս և այլայլել զպաշտօնեայս եկեղեցւոյ ըստ կամաց իւրեանց, և արկանել խռովութիւն 'ի տեղիս տեղիս. զինել զբաղումս ընդդէմ իշխանութեան ազգին. յորդո-